—Ուրախ եմք աւետելու մեր բարեպաշտ ընթերցողաց և բոլոր հասարակութեան ներկայ հաղարութ հարիւր վեթասուն և վեցերորդ տարեդարձը Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սիրելի զերակեցոյց սուրբ յարութեան, ամենայն խաղաղութեամբ կատարելնուս, շնորհիւ աչալուրջ հսկողութեան տեղւոյս զօրաց հրամանատար վեմ. Լիվա Փաշային։

Սուրբ Օրակի հետեւեալ աւուր պատարագին և Թափօրին հանդէսը մեծ և սովորականէն աւելի փառաւորութեամբ կատարեցաւ, ուր ներկայ էին քաղաքիս կառավարիչը, Բրուսիոյ, Աւստրիոյ, Մէքսիկայի և Թէնքի հիւպատոսները, քանի մի երեւելի աւստրիացի կոմսեր ու պարոնուհի մի և ուրիշ անհամար օտարականներ, որոնք տեսնելով սուրբ քաղաքիս մէջ հոգեւոր հանդէսի մի ամենայն բարեկարգութեամբ և մեծ շքեղութեամբ կատարուիլը, ուր ընդհանրապէս այսպիսի հանդէսները համատարութիւն եղած սրբազան տեղերուն մէջ շատ անգամ խռովութիւն, կռուով և անկարգութեամբ կը վերջանան. իսկ սուրբ Յովհաննէս ազգային Սայր եկեղեցւոյ մէջի այս աւուր սրտաշարժ և հոգեւոր հանդէսի մի փառաւորութիւնը ի խոր տրպաւորելով իրենց մտացն ու սրտին մէջ, գկնի պատարագին ուղղակի ի Պատրիարքարանն ելնելով՝ ուրախութեամբ յայտնեցին հայկական եկեղեցւոյ գեղեցիկ արարողութիւնները ու շքեղութիւնը՝ Սրբազան Պատրիարք Հօր, որ էր ժամարար միանգամայն և Թափօրապետ։ Նորին ամենապատիւ Սրբազնութեան առաջարկութեամբը բարեհաճեցաւ վեմափայլ Ղեշլը և մեծապատիւ հիւպատոսք հանդերձ օտարական այցելուաք սեղանակից ըլլալ Միաբանութեան ի հասարակաց ճաշատուն։ Սրբազան Պատրիարքը ըստ պահանջման պարագայից Սուլթան Ազիզ վեհափառ Կայսեր կենացը բաժակ մի առաջարկեց, յետոյ փոխադարձ բաժակ մի վեմափայլ Ղեշլիը առաջարկեց պարոն Սրբազան Պատրիարք Հօր և բոլոր ազգիս կենացը համար, երկրորդ բաժակ մի եւս տրուեցաւ թէ Նորին վեմութեան և թէ մեծապատիւ հիւպատոսաց կենացը համար։ Միաբանութեան սեղանոյն պարզութիւնը եւ չափաւորութիւնը մեծ գովութեան պատճառ տուաւ մեծարու այցելուաց, որոնք քաղցր յիշատակութիւն մի պիտի պահեն իրենց մտացը մէջ առ սուրբ Յովհաննէս, որոյ փառաւորութիւնը ու համբաւը ընդհանուր ազգիս կը վերաբերի անշուշտ։

—Նոյն օրը վախճանեցաւ սուրբ Յովհաննէս միաբաններէն ծերունաղարդ Կոմիտաս վարդապետը ի հասակի իբր իննսուն և հինգ ամաց։ Յիշեալ վարդապետը, որ իւր անոյշ բնաւորութեամբն և անբիծ վարքովը բոլոր միաբանութեան սիրելի եղած էր, յիսուն տարիէն աւելի միաբան լինելով՝ վաստակաւոր կը համարի սուրբ Յովհաննէս, և բաւական յիշատակներ եւս թողուցած է։

---

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Օ՛ինչ օգուտ իցէ առաքինանալ արտաքոյ, եթէ չարաչար իցեն կեանք առանին։

Իշխանաւորաց բարձրագահ՝ են օրէնք, և ժողովրդեան՝ իշխանաւորք։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ

digitised by ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ԱՐՄԵՆՈՑ ԵՊՈՒՍԿՈՊԱՏՈՒ ԵՍՏՍՏ ՍՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ